

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒԹԻՒՆԻ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՄՇԿ

ՀԱՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԺՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Եղիարթէք Անտոնովեան, Գրիգոր Մարեան իր եղբայրներով ու ընդը Հայկանուշ և Յովհաննէս Բժշկեանցները, սրտիցս արտայայտում են իրանց ազգականներին ու ծանոթներին առաջին ամուսնու, երկրորդները իրանց հօր և վերջինը իր անեք

ՄԵԼԻՔ ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՍԱՐԵԱՆՏԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ մարտի 23-ին. Ամբիճըն այսօր, չորեքշաբթի, մարտի 24-ին, երեկոյեան ժամը 7-ին. Յուդարկաւորութիւնը հինգշաբթի, մարտի 25-ին, հանգուցեալի բնակարանից, Հաւաքար, Պակրովսկի կաղարմի հանդէպ № 1, դէպի ու. Միսա Եկեղեցի. Թաղումը Սօջիվանքի գերեզմանատանը. 1—1

Ալեքսանդր և Պողոս Պետրոսեան Մելիքեանները, Հովհաննէս Պետրոսեան Միլքա- յեանը, Եկատերինէ Պետրոսեան Գալմարեանը սրտի դանուժեամբ յայտնում են ազգականներին և ծանոթներին իրանց սիրելի եղբոր.

ԵԿՈՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ այս մարտի 21-ին. Ամբիճըն չորեքշաբթի, երեկո- յեան ժամը 7-ին. Յուդարկաւորութիւնը հինգշաբթի, մարտի 25-ին, հանգուցեալի բնակարանից, (Хлебная площадь, № 29) դէպի Նորաշենի Եկեղեցին. Թաղումը Սօջիվանքի գերեզմանատանը. 1—1

ԲՈՎԱԼԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Դարձեալ տիբեռական արշաւանքի մասին. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գեղեցիկ սովորու- թիւնները շահագործվում են. Անպատկառ շա- հառակութիւն. Նամակ Խմբագրութեան. Եկե- ղին լուրեր. ԱՐՏԱԿՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պա- տերապի շօրջը. Նամակ Պարսկաստանից. ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ

ԴԱՐՁԵԱՅԻՆ ՏԻԲԵՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԵՍԻՆ

Մենք կարեւոր ենք համարում նորից մի քանի խօսք ասել անպիտանների կա- տարած արշաւանքի մասին. Տիբեռում, որի մասին հեռագրական գործակալու- թիւնը շարունակում է լուրեր հաղորդել թէ և համառօտակի, բայց որոշ.

Անպիտանները խոչընդոտի և անախորժ ընդարման հանգիստները Տիբեռում, բայց նրանք ցանկութեւն չունեն. յետ կենալ սկսած արշաւանքից և վճռել են առաջ գնալ դէպի Գիւմրի. Տիբեռի կրօնական պետը, զաւոյ-լաման, որ մի և նոյն ժո- մանակ և Տիբեռի վարչական պետն է, չէ համակրում անպիտան շարժման և մը- տաղիւր է դիմագրութեւն ցոյց տալ իր գործերով. Չինական կայսրի ներկայացու- ցիչը, որ գտնվում է զիլաւոր քաղաքում, Լհասայում, աւելի բարեհաճ աչքով է նայում անպիտան առաջխաղացութեան վրա և աշխատում է մեղքացիներ անպիտ- անների և տիբեռացիների յարաբերութիւն- ների սուր բնաւորութիւնը.

Ռուսից է գտնվում Տիբեռը. Տիբեռը գտնվում է Չինաստանի հա- ռաւարեւմտութեան. Տիբեռը շատ ընդար- ձակ երկիր է, որ ունի աւելի քան մէկ ու կէս միլիոն քառակուսի վերստ տա- րածութիւն և բազմազան է մեծ մասամբ սարահարթերից և մասամբ հովիտներից. Մարահարթերում և լեռներում խնամվում է տիբեռական այծը, որի մազը իր նուրբ կազմութեամբ և աղին յատկութեամբ ծառայում է նրբ թանկագին գործուածը- ների և հիւսուածքների համար և ներ- կայանում է իբրև հարստութեան աղբիւր այդ երկրի համար. Ե արտահանութեան մի առաւելագուր դէպի հեռաւոր երկրները. Հովիտներում և ձորերում զարգացած է այ- դեպործութիւն մի որոշ չափով.

Տիբեռը արեւմուտքից և հարաւից ընդ- գրկված է անպիտանական հողերով, հիւ- սիսում սահմանակից է նրան չինական Թուրքեստանը, իսկ Միւրեքից բուն Չինաս- տանը. Տիբեռը համարվում է բուդայական- նութեան կենտրոնը և նրա մայրաքաղաքը

Լհասան կատարում է նոյն դերը, ինչ որ Երուսաղէմը քրիստոնեաների և Մեկ- կան մահմեդականների համար. Եւրօպա- ցիները սկսել են մուտք գործել այնտեղ շատ հին ժամանակներից և երբեմն ըն- դունվել են բարեհաջակութեամբ, իսկ վերջին տասնեակ տարիներում նրանք դարձել են աստիճ, որովհետեւ տիբեռացի- ները սկսել են նկատել եւրօպական հիւ- ներ մէջ կամ կրօնական և կամ քաղա- քական գործակալների.

Անպիտանների համար Տիբեռի գրա- ռումբ վարչաց տնտեսաբանականներից մէկն է. Ունենալով Տիբեռը իր ձեռքին՝ Անպիտան յոյս ունի Աւրասիականի, Կա- ֆիրաստի և Տիբեռի միջով մի ճանա- պարհ ունենալ միջին Ասիայի վրայով դէ- պի արեւելեան. Չինաստան և դէպի Ուս- դաղ Ուկրաինայ. Անպիտան ներկայ բոլոր համարել է նպատակաւոր իր քաղաքական ծրագիրը իրագործելու համար և գործեր է իրականացնում Տիբեռի սահմաններում, որպէս զի միջազգային բանակցութիւն- ների ժամանակ կարողանայ պնդել իր ա- ռանձնակի իրաւունքներին և արտօնու- թիւններին վրա.

Սակայն տիբեռեան արշաւանքը նպա- տում է Չինաստանի բաժանման հարցի հերթական դարձնելուն, մի հարցի, որը համարվել է և համարվում է վտանգաւոր միջազգային տեսակէտով և որի վերա- բերութեամբ պետութիւնները պայմանա- տրվել են չափազանց զգուշ լինել իրանց քաղաքական գործողութիւնների մէջ.

Քաղաքական Եւրօպան և նրա մամուլը դեռ չեն յայտնել իրանց կարծիքները.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՅԻՎ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾԱՀԱԳՈՐԾ- ՎՈՒՄ ԵՆ

«Մշակ» № 37-ում «Ծաղով հարսանիք» վերնագրի տակ Դաւադից գրված թղթակցու- թեան մէջ շօշափվում է մի կարեւոր խնդիր. Ծաղով հարսանիք անելու սովորութիւնը մինչև այժմ էլ գոյութիւն ունի Դաւադու գիւ- դում, որից շահվելու, փող վաստակելու տգեղ դրձակութեամբ պահպանվում է քրդերը և միմիայն մի քանի օրով արձակուրդ վերցրած և գիւղ եկած վերստ երթորը. մէկ ուրիշ հարսանիք կատարել է հարսնացուի հիւանդ, մերձ ի մահ դրութեան ժամանակ, երկուշ կրելով մահանդ- դէպքից և այլն. Սկս այսպիսի օրինակները առիթ են տուել թղթակցին բացականչելու

«վերջապէս ժամանակ է մտածելու և ծաղին ու նմանօրինակ կազմելի սովորութիւններին վերջ տալու».

Բայց ինչ բան է ծաղը... Մինչև այսօր էլ հայ ժողովրդի այն խաւ- րում, ուր պահպանվել են նահապետական կենքի ձևերը և նախնական շատ կարգեր, բազմաթիւ սովորութիւններ շարունակ պահ- պանվել է նաև ծաղի սովորութիւնը, որը իր մէջ կրում է զուտ համայնական ոգի.

Նահապետական կենքը շատ պարզ էր իր բոլոր երևոյթներով. Սակաւապետութիւնը հա- մարվում էր աւարների գործ. Մարդիկ բաւա- կանանում էին շատ քչով, հապնվում, կերակը- վում էին չափաւոր, միաձե, միօրինակ, մի- մեանց շատ նման. հարուստ ու աղքատ կար- ծէք չը կար. Հասկացողութիւններով էլ նրանք շատ պարզ էին. Գոգանալը, գրկելը, հարստա- նալը ուրիշի հաշուով, յետին օրվայ համար մը- տածելը շատ էլ ըմբռնելի չէր նրանց համար. «բաւական էր մի «ուզղ» (օրապահիկ), վաղ- վաղ տէրն էլ Աստուած», ահա նրանց մտածո- յութեան ձևը, աշխարհայեացքը. Այս պայման- ների մէջ մի ամբողջ համայնք կամ գիւղ ապ- րում էր որպէս մի ընտանիք. Բոլորի համար ընդհանուր էր ուրախութիւնն ու վիշտը. Մէ- կի դժբաղդութիւնը տխրեցնում էր ընդհա- նուրին, մէկի բաղդաւորութիւնը ուրախու- թիւն բերում ընդհանուրին.

Եւ ահա մի մեծ ընտանիք կազմող այդ հա- մայնքը իր վրա վերցնում էր այն բոլոր հոգ- սերը, որոնք անհատական ոյժերից վեր էին. Մի քանի գերդաստաններ միասնա, ընդհանուր ոյժով մի գութան հանել, հերթով արտերը վարել, խոտատիւր հնձել, կալը կայսել, սը- րանք հայ գեղջուկի համար շատ սովորական բա- ներ էին. Աւելի բարդ օրինակ իր խոր իմաս- տով հանդիսանում էր գեղջուկի ամուսնութիւ- նը կամ գիւղական հարսանիքը, որը կատար- վում էր ամբողջ համայնքի մասնակցութեամբ. Նահապետական հասարակութեան մէջ ա- մուսնութեան հանգէտը, որպէս նուիրական ն- րկույթ, համարվում էր համայնքին զարգացնող խնդիր. Այդ հանգէտը պիտի լինէր ձուր և այն էլ ամբողջ համայնքի համար. բնականաբար այդպիսի հանգէտը, պահանջելով սովորականից միանգամայն դուրս ծախքեր, անհատական ոյժերից վեր պիտի լինէր և ահա համայնքը զաւրս էր այդ հանգէտի ծախքն ինքն հողաւոր, որը հարուստով, որը ուստատով և որն էլ նոյն իսկ փողով. Ահա այս նուիրաբերութիւնը, ո- րը կատարվում էր նոյն հանգէտի ժամանակ ի լուր ամուսնացնում իր որդուն. Մարմին էլ մինչև այժմ էլ գոյութիւն ունի. Սրանից էլ գործնական միջոց և խելացի ձև չենք կար- ծում մի այլ հասարակութիւն ստեղծել կարո- ղանաւ. Համայնքը հողում, ամուսնացնում էր իր երիտասարդ անդամներին շատ դուրին կեր- պով և այս կարգը պահպանվում էր բոլորի վերաբերմամբ անխտիր. Մէկը միւս համագիւ- ղացիներին «ծաղ» տալով, ամուսնութեան ծախսի մէջ մասնակցելով, իր հերթում էլ ըս- տանում էր և համագիւղացիների տուած ծա- ղով ամուսնացնում իր որդուն. Մարմին էլ գեղեցիկ խնայողական պանծարան, սրանից էլ օրինակելի փոխառութիւն. Այս կարգը այնքան ճշգրտութեամբ պահպանվում էր, որ զարմանք միայն կը շարժէր. Եւ ահա այժմ էլ մեր երկրի շատ խուլ անկիւններում դեռ պահպանվում է ընտանիքի սրբութիւնը.

Այսպիսի մի կարգ գոյութիւն է ունեցել նաև մահվան դէպքում, սակայն նա աւելի շուտ է մոռացութեան տրվել, քան ծաղն է. Նոր-Բագայէտը բաղաւորում մինչև այժմ էլ սո- վորութիւն է՝ որ հերթով մօտիկ ազգականնե- րը հաց են պատրաստում և ուղարկում մեռե- լատուն մի քանի օր շարունակ. Մի ընտանիք կորցնում է իր մի անդամին, որը վշտի մէջ համակված, այժմեան սովորութիւնով ստիպ- ված է բազմաթիւ «գոխապանք» խոտացող- ների փողի հոգար քաշել, մահաւանդ կարելի դէպքում. Այսպիսի անհաճոյ դրութիւն նահա- պետական հայր աւելի լուր ըմբռնելով կարգ

է սահմանել այդ ծանր օրերի հոգար իր վրա վերցնել, որի օրինակը մենք տեսանք.

Սակայն ինչ է մնացել այժմ այս գեղեցիկ համայնական կարգերից. մի տգեղ շահագոր- ծում, որը նողկանք է ազդում մարդուն.

Նահապետական կենքը տեղի է տուել նոր հոսանքներին, կենցաղավարական ժամանակա- կից բարբերին. Իւրաքանչիւր մարդ ապրում է իր համար, իր չորս պատերի մէջ, մտածե- լով միմիայն իր ստամոքսի վրա և նա դեռ շահագործում է մի սովորութիւն, որը նուիրա- կան էր նահապետական մարդուն իր բարոյա- կան հիմունքներով.

Ամուսնացնում են դեռ ևս դիւրնարկան ծա- տայութեան մէջ եղողին, որպէս զի առիթ ու- նենան ծաղ ժողովել. պակում են մերձ ի մահ պատկած հարսնացուին. մի դուցէ մահը վրա հասնէ և գրկվեն ծաղից. Մենք հաւատում ենք թղթակցին. մեր կողմից կաւարացնենք մի ա- լելի ուժեղ օրինակ. Երևանի գաւառում մի կեղեքիչ վաշխառու, որը վարում էր ջրբաժա- նի պաշտօնը, հէյն այդ ժամանակ ամուսնաց- րից իր որդուն և հրաւիրեց հարսանիքին ամ- բողջ մահալի մարդկանց միմիայն նրա համար, որ ծաղը շատ լինէր, և նա սխալված չէր. Բո- լորը նրանից կարնում ունէին, մի կը համար- ձակվէր «չալբազուն» օրինաւոր ծաղ չը տայ, չէ որ նրա արար, նրա բաւարար կը չո- րանար. և ահա վաշխառու կեղեքիչը, օգտվե- լով հանգամանքից, մի վերջիվաջ մէջ ծաղ ստացաւ 2 թէ 3000 ռուբլի, որը ամբողջ մա- հալի մէջ խօսակցութեան նիւթ էր դարձել.

Մենք համաձայն ենք, որ ծաղը վերացվի, բայց համաձայն չենք թղթակցի հետ այն բա- նում, որ այդ սովորութիւնը ամօթալի է և զգուսնք ազդող.

Եթէ այսօր կեղտոտ մարդիկ շահագործում են մի գեղեցիկ սովորութիւն, այդ դեռ չէ նը- շանակում, որ սովորութիւնը ինքն է կեղտոտ, ամօթալի, այլ զարբերի մարդիկ, որոնք ընդու- նակ են շահագործելու ամեն մի սուրբ գաղա- փար.

Ա—Դօ
Ս. ԳԱՅԱՆԻ ՇԱՀԱՏԱՅԻՆՈՒԹԻՒՆ
(համակ Բաղդուց)

Մեր մամուլը շատ անգամ է առիթ ունեցել խօսելու բազմաթիւ ու բազմատեսակ խաչա- դողութիւնների մասին, որոնք կատարվում են մեր առանց այդ էլ անմխիթաբ շրջաններում, աւելի ու աւելի թունաւորելով մեր դժգոյն միջոյրարը. Մի տեղ դուրս է գալիս մի տգեղ գրքաց և օգտվելով ժողովրդի նախապաշար- մունքներից՝ ապրուստի միջոց է ձարում. մի ուրիշ տեղ երևան է գալիս մի «խնտիկընտ» բժիշկ և չարք գործ դնելով ժողովրդի հաւա- տալիքը, փոխանակ իր կոչման բարձրութեան վրա կանգնած բուն բժիշկական միջոցներով գործելու, փոխանակ տգեղ ժողովրդին ծանօ- թացնելու առողջապահիկ պայմանների հետ, վերջապէս փոխանակ աշխատելու նրա միջից դուրս վանել բժշկութեան վերաբերմամբ ու- նեցած նրա թիւր հասկացողութիւնը, ընդհա- կառակն ինքն է աշխատում ամբողջ մտաւոր հօրիզոնը պարփակված պահել տգիտութեան շրջանակներում, որպէս զի մի քանի կօպէկ աւելի դուրս կորզէ նրա գրպանից. Մի այլ տեղ մի «կրթված» շինավաճառ, ազգապիտան կամ բարեգործական դիմակը հագած՝ բուն գործը փչացնում ու մարդկանց թերահաւա- տութեան առիթ տալիս.

Եւ մեր մամուլը իր սկզբնաւորութիւնից մինչև այսօր աշխատել է հարուածել այդպի- սի երևոյթները. սակայն դրանք կան և օրէ- ցօր կարծէք աւելի են բազմանում. Բայց դա չէ նշանակում, թէ մամուլը պէտք է լռէ... Ոչ, նա պէտք է ասէ, միշտ կրկնէ, միշտ մա- քառէ, որպէս զի ժողովուրդն ինքն զգայ և միջոցներ ձեռք առնէ դուրս վնասելու իր մի- ջից այդ խաչադողութիւններ. Իրանք խաչադողութիւններ են, այն, իսկ ինչ անուն կը տար այն պարունի սիրաբար-

ծուծանքը, որ ձեռք է գցում—չը գիտեմ ինչ միջոցով, մի քանի անգործագրեր և շրջիվով ժողովրդի դանազան խաւերը, աշխատում է համոզել, որ պէտք է այս կամ այն գիրքը ստանալ։ Եւ գիտեցին, բանտորը, շատ անգամ նոյն իսկ ինտելիգենտը չեն զբաղւում բաժանորդ գրելով։ Մինչև այստեղ հիանալի է. իսկ շարունակութիւնը. էհ, շարունակութիւն էլ չը կայ, որովհետև խեղճ, միամիտ բաժանորդը ամիսներով սպասում է իր գրքին, դիմում է խմբագրութեանը և պատասխան է ստանում, թէ դրամը չէ ստացվել, թէ այդպիսի պարոնի իրանք չեն ճանաչում... Ուզում է պարոնի հետ խօսել, բայց նա անհերքեցիկ է—աճապարել է մի ուրիշ շրջանում իր քանքարաւոր գործունէութիւնը շարունակելու։

Ասածներս հաստատող մի փաստ երէկ լսեցի, որը առիթ տուեց տողերս գրելուն։

Մի շրջանում, միջոցներն ու պահանջն աչքի առաւ ունենալով յորդորեցինք «Առողջագրական թերթ» ստանալ։

—Մենք արդէն գրվել ենք բաժանորդ, ասացին նրանք, բայց մինչև օրս չենք ստացել։

—Ի՞նչպէս, հարցի ես զարմացած։

—Մի օր եկաւ մեզ մօտ Շ. ազգանունով մի պարոն, որին Բագուում շատ շատերն են ճանաչում և առաջարկեց բաժանորդ գրվել. մեր աշխատանքներէն 7 մարդ գրվեցին. երկար սպասեցինք, թերթը չը ստացվեց. դիմեցինք խմբագրատուն, պատասխանեցին թէ ոչ այդպիսի գործակալ ունեն և ոչ էլ ճանաչում են այդ պարոնին։ Մենք նորեւրդ դիմեցինք պարոնին. նա մեզ հանգստացրեց, թէ չուտով թերթը կը ստանանք. անցաւ նորից մի քանի ամիս և մինչև օրս էլ թերթը չը կայ ու չը կայ։

—Այդ պարոնը, ասաց մի ուրիշը, բացի «Առողջագրական»-ը, ուրիշ թերթի համար էլ է բաժանորդեցի գտնում. անցեալներն էլ ինչ որ «գրքի» բաժանորդագրութիւն էր բացել...

Արդ՝ մենք սոցոքոված ճշմարտութիւնը և բնական հանելու միակ տեսչով գիմում ենք վերոյիշեալ պարոնին հետեւալ առաջարկութեամբ։ Եթէ նա կարող է բացասել իր վրա բարդված մեղադրանքները, մենք յետ կը վերցնենք մեր մեղադրանքը, հրապարակօրէն ներողութիւն խնդրելով, որ թիւրբացութեան մէջ ենք ընկել. իսկ եթէ ոչ, յանձնում ենք նրան հասարակութեան ու մամուլի անպաշտ դատաւարանին։

ՆԱՄՍԿ. ԽՐԱՎԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 10-ին

Թող տուէր գետնից այս երկրորդ «Մշակի» համարներից մէկում, որպէս զի վերջ դրվի այն լուրերին, որոնք տարածվում են քաղաքում—Հաւաքարի թատրոնի վերաբերմամբ։

Անա տան և հինգ տարի է, որ ես նուիրված եմ նայող բեմին և թէ որքան օկտավայր եմ եղել դրան, թող դատէ հասարակութիւնը. մի բան միայն կասեմ, որ այդ ժամանակամիջոցում իմ, այսպէս ասած, մեղքի տակից, իրեն ընթերցող, դուրս եմ եկել բանական ոյժով, որոնց ազդանունները անկողի եմ համարում այստեղ բեմի։

Գործ սկսել այնպիսի մի տեղում, որտեղ մեծ դրամաբուհում պիտի է հասարակութիւնը ձանդղել գիտնականից և ընտելացնել թատրոնին... այդպիսի մի գործը արժանի է համարների և արակողներին և ոչ թէ համարակր։

Գիտ. պ. Վարշամանի հետ սկսած բանակցութիւնների ժամանակ, աւելի ուշ եւս, երբ պայմանները վերջացած էին, ամեն կողմից աշխատեցին ձեռքից իսկ գործը Սկզբից շնորհակալ. սկսեցին զրոյել իմ դէմ պ. Վարշամանին, ասելով, թէ ես չեմ կարող վերջացնել գործը։ Վերջացի շնորհակալութեամբ տարածեցին, թէ իմ գիտնական տղան բանալու։

Բացվեց թատրոնը, սկսեցի մի համակտ խմբով ներկայացումները, բայց թշնամին ընծաւ չէր, ամեն կողմից աշխատեց և աշխատեց և խանգարել գործը և անուշեցնել ժողովրդին դէպի իմ թատրոնը։

Իսկ այժմ երբեք երբ տեղ ժողովներ է գումարում, որպէս զի խնդիր իմ մեղքիցս այն, ինչ շինել եմ իմ սիրելի զեղարուեստի համար, տարածելով—Արաքսեանի գործերը վատ են գնում, նա գործ տանել չէ իմանում և այլն... Ո՞րտեղ էիր դուր, անկողնի մըշնամներն եւ չար ողբեր, ասում է Գիւն-Քիշոբ, Ո՞րտեղ էիր դուր, ասում եմ ես, երբ ամառային շոր ժամանակ մշակների հետ բանում էի եւ ցիւն էի կրթում (ուրեք ամառանոցներում)։ Ո՞րտեղ էիր, երբ ես գլուխ էի կտրում, թէ ի՞նչ միջոցներով եկերտական լուրք բերեմ, որովհետեւ սովորական լուսաւորութիւնը մօտ տան և հինգ հազար էր նստում, բայց շնորհիւ յարգելի պ.պ. Ս. Նունուկարեանին և թոյն Գ. Կիրակոսեանին, որոնց ես պաշտօնով եմ որպէս բարեկամ, լուրք բերեց Հաւաքար։ Ո՞րտեղ էիր դուր, երբ յանձնարարով պահանջում էր ամսման խողովակներով շուր բերել ձրիկնի դէմ, որը նստում էր մօտ հազար բուրի, բայց շնորհիւ յարգելի իշխ. Ն. Վ. Արդուեանին, Թիֆլիսի քաղաքագլխին, երկու օրում շինվեց։ Վերջապէս, որտեղ էիր դուր, երբ գործի ընթացքում ամեն տեղից մուրհակներ և հաշիւներ կար-

կուտի պէս թափվում էին եւ չէին ուզում սպասել։ Այժմ, երբ պարտքերի մեծ մասը վճարել եմ, այժմ ուշ է եւ ոչ միայն ուշ է, այլ անկողնի է մտածել անգամ եւ նոյն իսկ լաւ չէ խանգարել այսպիսի մի սուրբ գործ։

Գերասիմ Արարեսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութիւնը մեղմեցրեւ է սպազներ իր օգտին տրված 1904 թիւ փետրվարի 21-ի ներկայացման հետեւեալ հաշիւը. Մուտք եղել է տոմսակներէն 1074 66 կ., պրեմիա և ծաղիկներէ վաճառումից 92 կ. 76 կ.—ընդամենը 1167 կ. 42 կ.։ Մուտք—Թատրոնի վարձ 240 կ., լուսաւորութեան լրացուցիչ ծախք 10 կ., սպազներութեան 10 կ., ծաղիկներն, շրեք—54 կ. 63 կ., մասնակցող դերասաններին 74 կ., յուշարարներն, սափրիչին, աղախնուն, ծառաների—33 կ., արտագրութիւն, դաշնամուրի փոխադրութիւն և այլն՝ 23 կ. 50 կ., աֆիշներ, յայտարարութիւններ և այլն—48 կ. 99 կ., ընդամենը 499 83 կ.։ Զուտ արդիւնքից, այսինքն 667 կ. 59 կ.—ից 10 0/0 յատկացված է Կարմի խաչի օգտին—68 կ. 76 կ.։ Ընկերութեան օգտին մնում է 600 կ. 83 կ.։ Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր մասնակցողներին իրանց բարեհաճ ձեռնուութեան համար։

Զատկական տօնին չբաւարարելու բաժանուհ համար ստացանք տիկ. Մաթիսիկ Գուրաբանից 5 բուրի։

Այլ է բաւարարուած մարտի 20—22-ին Երևանի նահանգական դատարանի ժամանակաւոր բաժնիքը բնից Սէրսանդորցիի ընտելի Հայկ Ամատունի, Սիմէն Յարութիւնեանի և Մեծ-Դուրեանի դիւղի քահանայ Տէր-Յովհաննէսեանի գործը, որոնք մեղադրվում էին պատժական օրէնագրի 264-դ յօդուածի հիման վրա։ Դատարանի կազմը հետեւեալ էր. նախագահ՝ Ժ. Կ. Բախալ, անդամներ՝ Ա. Յ. Մատուսիկի և Ն. Գ. Եակոբեանի. մեղադրում էր Երևանի նահանգական դատարանի պրօկուրօր Ն. Ա. Գլազովը, իսկ պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Ն. Վ. Մուրավիկին (Մոսկվայից), Լ. Ա. Պոմմեր-տոյսկի, Տ. Լ. Յովհաննէսեանի և երդուեալ հաւատարմատարի օգնական Գ. Ի. Պատիսեան (Թիֆլիսից)։ Գործը ընկավ էր գլխակի Դռնբաց յայտարարված վճռով մեղադրեալները յանցաւոր ճանաչվեցին պատժական օրէնագրի 266-րդ յօդուածի հիման վրա և դատապարտվեցին բանտարկութեան—Յովհաննէսեանը քահանան և Հայկ Ամատունին 8-ական ամիս, իսկ Սիմէն Յարութիւնեանը 6 ամսով։

Բագուից մեզ հաղորդում են, որ անցած շաբաթ օրը, մարտի 20-ին, տեխնիկական ընկերութեան դահլիճում բժիշկ Աղ. Պատիսեանը կարգացել է մի ընդարձակ դասախօսութիւն, որը բաղկացած է եղել երկու բաժնից։ Առաջին բաժնի նիւթը եղել է «Ժողովրդական աները և նրանց կուլտուրական դերը», իսկ երկրորդ՝ մասին նիւթը եղել է «Թերապիա»։ Լսում ենք, որ նոյն պարոնը մի ամսից յետոյ Բագուում կարդալու է իր երկրորդ դասախօսութիւնը՝ նիւթ առնելով «Թերապիա» և կուրսը նրա դէմ։ Տեխնիկական ընկերութիւնն ունեցել է մօտ 300 կ. եկամուտ այդ դասախօսութիւնից։

Ասիաբաղի հայ լուսաւորչական կանանց բարեգործական ընկերութիւնը ուղարկել է մեր խմբագրութեան 1905 թիւ իր մանրամասն հաշիւը, որից, երևում է, որ ընկերութիւնը ունեցել է այդ տարին 80 անդամակներ։ Ընդհանուր մուտքը եղել է 2907 կ. 67 կ., իսկ ընդհանուր ծախք եղել է ընդամենը 1695 կ. 75 կ.։ Ներկայ տարվայ յունվարի 1-ին ընկերութիւնն ունէր պետական բանկի խնայողական արկղում 1050 կ. և անձեռնմխելի գումար 161 կ. 92 կ.։ Այդպիսի մի հեռաւոր անկիւնում հայկական մի խումբ գաղթականներին մէջ գործող մի փոքրիկ ընկերութեան եւանդը ամեն գովեստի ու խրախուսանքի արժանի է։

Թիֆլիսի պատահականաբար կառավարելը խնդրում է մեզ յայտնել, որ ամբողջ Աւագ շաբաթի ընթացքում կընդունվեն Զատիկի համար շնորհաւորական հեռագիրներ, կը հաղորդվեն այդ հեռագիրներն իրանց նշանակ-

ված քաղաքները նախօրոք, իսկ Զատիկի կէրակի առաւօտեան ժամը 8-ին կը յանձնվին իրանց հասցէտէրերին։

Մարտի 18-ին կայսերական ուսուց պատմական և հնագիտական ընկերութիւնը՝ Մօսկվայի համալսարանին կից՝ տօնեց իր գոյութեան 100-ամեակը։ Դա ուսական գիտական ընկերութիւնների մէջ ամենահիններից մէկն է։ Դրա անդամների շարքում կան բազմաթիւ իրանաւոր անուններ ուսւ պատմութեան և հնագիտութեան ուսումնասիրութեան գործում։ Դրա անդամներն են եղել հանգուցեալ Պօգօդինը, Բոգեանսկին, Բիւխեւիլը, Սօլովիովը և այլք։ Կենդանի Զաբելինը, Կիւլչեւսկին և այլն։ Ռուսաց պատմութիւնը շատ բանով պարտական է այդ լուրջ ընկերութեանը։

Թիֆլիսի քաղաքային վարչութեան նախասնեակում կարծած է այն երիտասարդների անուանացուցակը, որոնք ծնվել են 1882 թուի հոկտեմբերի 1-ից մինչև 1883 թուի հոկտեմբերի 1-ը և ներկայ 1904 թուին պիտի ենթարկվեն վիճակահանութեան։ Այդ անուանացուցակը տարիքի 1-ից պիտի պատից վերցնվի և նոյն ամսի 15-ին ներկայացնվի դիւնուրական աստանին։ Թիֆլիսի քաղաքային, որոնք ծնվել են յիշեալ ժամանակամիջոցում և չեն մտքոված վերոյիշեալ ցուցակում, պարտաւոր են մինչև ապրիլի 15-ը յայտնել քաղաքային վարչութեան, ներկայացնելով դրա հետ միասին իրանց ծննդական և կույման վկայականները։ Ամսի 15-ից յետոյ նոյն խնդրով պիտի դիմեն դիւնուրական աստանին, ներկայացնելով հիմնաւոր պատճառներ։

Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանի կառավարչի գեկուցումը երևում է, որ անցեալ փետրվար ամսի ընթացքում ապաստարանում գիշերել են 3623 հոգի, որոնցից 3500 հոգի տղամարդիկ են եղել, 123 հոգի կանայք։ Ազգութեամբ ուսանել եղել են 1435 տղամարդ և 87 կին, հայեր 1413 տղամարդ և 7 կին, վրացիներ՝ 499 տղամարդ և 29 կին, թուրքեր՝ 50 տղամարդ, գերմանացիք 64 տղ., լեհեր՝ 33 տղ., և զանազան ազգութիւններից 6 տղամարդիկ։ Ամենատա յաճախողներ եղել են մշակ դասակարգից—1800 հոգի։ Գիշերողներ թուում է եղել 1 նախկին ուսուցիչ և 2 աշակերտ։

Հիւն-Լիթիմի 3 մեզ գրում են. «Վերջին ժամանակներս յամառութեամբ լուրեր են պարտում, թէ մայրաքաղաքի մի ինչ որ ընկերութիւն Հիւն-Լիթիմում մտադրել է իր միջոցներով թրքախառնութիւնի համար սանատուրում իրեն այն հողի վրա, որ Խուբեկի է պրօֆէսօր Բօմանովսկին հէջը վերոյիշեալ նպատակով։ Բօմանովսկի հողը գտնվում է Հիւն-Լիթիմի կից՝ հիւսիս արևմտեան կողմը, անտառին կպած։ Թէ որչափ նպատաւոր է այս քաղաքի կլիման թրքախառնութիւնին—այդ արդէն քանիցս ապացուցված է մասնագէտ բժիշկապետների կողմից։ Բօմանովսկու հողի տարածութիւնն է տասնհեկտոն դեկաետին. նրա մի մասը ծածկված է խողով վազերով, միւսը՝ մրգատու ծառերով, իսկ մի այլ մասն էլ պատուաւստած անկարանով։

Սիմֆերոպոլի 3 մեզ գրում են. «Միմֆերոպոլի ամբողջ 3—400 տուն ունեցող հայ համայնքը միանգամայն չէ մասնօրէն եկեղեցական քառաձայն խումբ ունենալու մասին։ Եկեղեցի, յաճախող այժմ գրեթէ չը կայ, և պատճառը, անշուշտ, եւս կազմակերպված խումբ չը լինեն է։ Ունենք մի Տէր-Լազար, որ իրան «Կոմպօզիտօր» է համարում, այնպէս որ, ամեն անգամ, երբ ծիսականների մէջ հարց է ծագում խմբի կազմակերպութեան մասին և ցանկութեան է յայտնվում խմբապետ Բուրաբի, Տէր-Լազարը իսկյոյ յայտնում է, որ ինքը առաւել լաւ գիտէ խումբ կազմել, քան որ և է մի խմբապետ, որ ինքը եւրօպական ճայնագրութիւնը լուրջ կեպով ուսումնասիրել է, որ ինքը «Կոմպօզիտօր» է և այլն, և գործը միշտ մնում է թերի. խումբ չէ կազմվում, խմբապետ էլ չէ հրաւիրվում, բայց մինչև էրբ։

ԳՐՕԶՆԱՅԻՑ մեզ գրում են. «Չը նայելով որ տեղիս քաղաքային դպրոցից և գիմնազիայից, բայց նա իր պարտականութիւնը չէ կատարում։ Օրինակ, երբ մօտենում է ոտճիկ ստանալու ժամանակը, քահանան գնում է դպրոցները և մէկ-երկու օր պարապում է, իսկ

փողը ստանալուց յետոյ ուսումնասիրները չէ յաճախում Աշակերտների և աշակերտուհիների մեծ մասը խօսել անգամ չը գիտեն մայրենի լեզուով։ Մինչև էրբ պէտք է այսպէս շարունակվի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՄԱՋՄԻ ՇՈՒՄԶՐ

Նիւ-Չմուսի չեզոքութեան խնդիրը. «Information» լրագիրը հաղորդում է, որ իբր Ռուսաստանը առաջարկել է Միացեալ-Նահանգների կառավարութեան համաձայնել Նիւ-Չմուսի և Լեադուենեան թերակղզու արևմտեան մասը չէզոք ճանաչել։ Սակայն Միացեալ-Նահանգների կառավարութիւնը մերժեց այդ առաջարկութիւնը, յայտնելով, որ Նիւ-Չմուսի չէզոքացումը ներկայումս Եապօնիային լուրջ գծաւորութիւնների մէջ կը ձգէ. այդ պատճառով, ամերիկական կառավարութիւնը յայտնեց ուսականին, որ Նիւ-Չմուսի գտնվում է պատերազմական գործողութիւնների շրջանում, ինչպէս Պօրտ-Արտուրը։ (Нер. Вѣд.)

Նոյն խնդրի համար Լօնդօնից հեռագրում են մարտի 17-ին, թէ բրիտանական կառավարութեան ճանաչել Նիւ-Չմուսի, իբրև մտնող պատերազմական գործողութիւնների շրջանում և իր այդ որոշումը պայմանաւորում է նրանով, թէ բրիտանական հպատակների կիսաքի և գոյրի պաշտօնութեան համար միջոցներ պէտք է ձեռք առնել։

Ապրիլայի այդ որոշման միացան Գերմանիան, Ֆրանսիան և Միացեալ-Նահանգները։ (Вирж. Вѣд.)

Եապօնացիների նոր ծրագիրը. «Matin» լրագրում տպված է հետեւեալ հեռագիրը. «Ռուսաց դիւնուրական միջնորդութեան մէջ ստացված տեղեկութիւնների համաձայն, եապօնացիները մտադրել են զօրք ցամաք իջեցնել չինական չէզոք հողի վրա, Լեադուենեան ծոցի արևմտեան ափում։ Թշնամու բոլոր շարժումները հաստատում են այդ տեղեկութեան հիմնաւորութիւնը։ Ուրիշ տեղեկութիւնների հիման վրա, եապօնացիները թողել են իրանց նախկին ծրագիրը և հրաժարվել են Կօրէա մեծ թուղ զօրք ուղարկելու մտքից։ Բացի դրանից հնարաւոր է համարվում, որ եապօնացիները դիվերսիա (սուտ շարժում) կանեն Փօիէտի ծոցում, բայց Լեադուենեան ծոցը կը մնայ նրանց գործողութիւնների գլխաւոր կէտը։ Կօրէա ափ իջնելը, ինչպէս երևաց, ներկայացնում է անհապի գծաւորութիւնների, ուստի վճռված է պատահական զօրք ափ իջեցնել չինական հողի վրա, ուր եապօնացիները ուսանելի հետ հանդիպելու երկիւղը չեն կարող ունենալ։ Բայց այդ կողմում միայն երկու յարմար տեղ կայ—Ցինվանգա և Մինանչէն։ Այդտեղ ափ իջնելով, եապօնացիները կապանով են իրանց ռազմագիտական դիւր, որի օգնութեամբ նրանց կը կանգնեն ուսանելի թիւի մօտ և մի և նոյն ժամանակ կը տիրապետեն Պէկինի վրա։ Չինաստանին կամ չինական զինեքախներին Պետերբուրգում շատ չեն հաւատում և կարծում են, որ նրանք կարող են, ուղադրութիւն չը դարձնելով Պէկինից եկած հրամանների վրա, համաձայնութեան մէջ մտնել եապօնացիների հետ։ Ռուսաց դիւնուրական իշխանութիւնները հարկաւոր համարեցին այդ ի հսկատի ունենալ և դրա դէմ նախազգուշութեան միջոցներ ձեռք առնել, աչքից բաց չը թողնելով սակայն միջազգային բարգրութիւնները, որոնք կարող են ծագել, եթէ եապօնացիները ցամաք իջնեն չինական հողի վրա։ (Рос. Вѣд.)

Գործերի վիճակը Կօրէաում։ Լօնդօնից հեռագրում են, թէ լուրեր են պատում, որ եապօնական նաւատորմը խոշոր կորուստներ է ունեցել։ Ամբողջ Կօրէայում, այնտեղ, ուր չը կայ եապօնական զօրք, տիրում է անհիշաւորութիւն ճանապարհները վխտում են աւազակային խմբերով։ Զգացվում է դրզուսմ եապօնացիների դէմ, որոնք, «Morning Post» լրագրի տակով, արդէն վեց շաբաթվա մէջ կորցրին այն բոլոր օգուտները, որ ապահովված էր նրանց համար աշխարհապարհական դերքի և նաւատորմի քանակական գերազանցութեան պատճառով։ (Вирж. Вѣд.)

Վալդիօսօսիեան եկաղաքի մասին եկրպուրիւններ։ Մինչև այսօր Վալդիօսոսիեան եկաղաքային ուր գտնվելու հարցը դեռ չէ լուծված։ Լօնդօնի դիւնուրական-ծովային շրջաններում զանազան ենթադրութիւններ են ասում Վալդիօսոսիեի ուսուց եկաղաքային տեղի մասին։ Ոմանք հաստատում են, որ նա գնացել է պաշտպանելու Սախալին կղզին, ուրիշները

կարծում են, թէ նա միացել է Պօլս-Արտուրի նաւատորմին հետ, իսկ կան և այնպիսիները, որոնք կարծում են, թէ նա լող է տալիս հապօնական կղզիների շուրջը: Մարտի 16-ին լուր տարածվեց, որ Վլադիվոստոկի հանգրաւանի շրջանում է արել մի հապօնական պատերազմական նաւ, բռնել է մի բանի առեւտրական շրջանակը և աշողութեամբ վերադարձել է Վլադիվոստոկ: (Таш.)

Անգլիացիներ եւ ռուս-հապօնական պատերազմը: Անգլիայում և զինւորական, Լոնդոնում, ամեն օր ահազին բանակութեամբ նիւթեր են հրատարակում Հեռու Արեւելքի մասին: Կարելի է կարծել, գրում է Լոնդոնից ռուսական մի լրագրի թղթակից, թէ պատերազմը անողը ոչ թէ Ռուսաստանն է, այլ Անգլիան: Նորեքս մենք յիշեցինք Համիլտոնի հրատարակած «Կօրէս» գրքի մասին. այս օրերս կապիտան Բրիսկլին նոյնպէս հրատարակել է մի ստուար աշխատութիւն «Ենպօնիս» վերնագրով: Լրագիրները, ամսագրական և շաբաթական հանդէսները լի են նոյնպէս բազմաթիւ յօդուածներով, տեսութիւններով, գիտողութիւններով: Եւ այլի է ընկնում այն հանգամանքը, որ այդ յօդուածները և տեսութիւնները կազմվում են ոչ թէ կողմնակի կերպով հաւաքած տեղեկութիւնների, այլ սիսկական գիտողութիւնների և կատարված ճանապարհորդութիւնների հիման վրա: Թիչ չեն և մասնագէտներ, որոնք զբաղված են գուշակելով հապօնացիների արշաւանքի հաւանական ծրարագիրը:

Կապիտան Բրիսկլին, երկար ապրած լինելով Հեռու Արեւելքում, շատ լաւ ծանօթ է Լեւոստոնեան թերակղզու հետ: Իր գիտողութիւնները հիման վրա, նա գալիս է այն եզրակացութեան, որ Կօրէսյում ցամաք չեն հանվի բոլոր այն գօրծերը, որոնք գուրս են եկել Ենպօնիայից: Ենպօնացիները կը թողնեն Կօրէսյում միայն այնքան գօրծ, որ հնազանդութեան մէջ պահեն այդ երկրի ժողովուրդը, որովհետեւ, չը պէտք է մոռանալ, որ Կօրէսցիները ատում են հապօնացիներին: Այդ ատելութիւնը միայն վերջին ժամանակի արդիւնք չէ, այլ կուտակվել է դարերով: Ամեն մի Կօրէսական տան մէջ աւանդվում են սերունդից սերունդ պատմութեան և լեզուի դասեր այն մասին, թէ ինչ են քաշել իրանց նախնիները վեց դար արանից առաջ Ենպօնական նուաճողների ձեռքից: Ենպօնացիները գօրծ կը թողնեն Կօրէսյում, որ նախ՝ զսպեն ժողովուրդը, երկրորդ, բաց պահեն հաղորդակցութեան ճանապարհները յետ նահանջման դէպքում, եթէ գօրծերը Մանչուրիայում վատ գնան միկաղօր գօրծի համար: Բայց ոչ ռուսները, ոչ էլ Ենպօնացիները չեն ընտրի Կօրէսն պատերազմական գօրծողութիւնների բնւ, երբէք հապօնացիները փորձ չեն անի անցնել գետաբանցիկ սարերի այն 200 մղոն տեղը, որ բաժանում է Ենպօն գետը բաց տեղից և ռուսական երկաթուղուց: Ենպօնական գօրծերի գլխաւոր մասը կը շարժվի դէպի Նիւչուան: 1894 թ. պատերազմից յետոյ Ենպօնացիները ամբողջ տարի գրաւեցին Նիւչուանից մինչև Մուկլէնի հողը և այդտեղ լաւ յիշողութիւն թողեցին իրանց մասին: Ենպօնացիները այդտեղ կը գտնեն իրանց անձնուէր ժողովուրդը: Լեւոստի արևմտեան կողմում ապրող բնիկները հաճութեամբ կը մատակարարեն հապօնացիներին փոխադրական միջոցներ, ուտելիք և ֆուրած: Ենպօնացիները կատարեալ վերադր ուսումնասիրել են այդ վայրերը: Ներսիս գիտեն բոլոր գիւղերը, խրճիթները, փոսերը, լճերը և գերեզմանները: Այդ տեղը նպատակաւ է հետեակ գօրծի լայն պատերազմական գօրծողութիւնների համար: Հեծելազօրքի համար նա անպէտք է, իսկ յայտնի է, որ հեծելազօրքը—հապօնական գօրծի թղթակցութիւնն է: Ապա Նիւ-Չուանի և Մուկլէնի մէջ տեղը հարուստ է պաշարներով: Այդ է պատճառ, որ հապօնացիները աշխատում են իջեցնել իրանց գլխաւոր ուժերը Նիւչուան և երբ նրանք գրաւեն Նիւչուանը, նրանք կունենան գեղեցիկ հիմնակէս: Ենպօնական կունենայ այդ ժամանակ իր տրամադրութեան տակ երկաթուղին արևմտեան մասում, մինչև Շանգայգուան, նոյն իսկ վերև, մինչև Մին-միսիները: Ենպօնիան կարող է կարել ռուսական երկաթուղին և մեկուսացնել Պօլս-Արտուրը: (Рус. Вѣд.)

Ռուսական Բալթիկան Էսկադրան: «Vos. Zeitung» լրագրին հեռագրում են Կիլից, որ Ռուսաստանը ամեն շանք գօրծ է դնում կատարեալ պատրաստ դրութեան մէջ դնել Բալթիկ ծովում գտնված իր Էսկադրան: Բոլորովին պատրաստ են ծովը դուրս գալու 3

զբաղուոր, 4 զբաղապատ կրէյսեր, 8 զբաղապատ նաւ, 7 կրէյսեր փոքր չափի, 4 կօստրականանաւ և 20 մեծ ախանաւ: (Новости.)

Նիւյորքի մասին եւս իտալում են: «New-York Herald» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է մի բաւական հին շինծու լուր, թէ Շվեդիան մեծ ուշադրութիւն է դարձնում Բալթիկ ծովի ծովային գօրծողութիւններ կատարելու ծրագրի ուսումնասիրութեան վրա և թէ իբր նա այդ անում է Ենպօնիայի խորհրդով: Շվեդիան, այսպէս է ներշնչում նրան Ենպօնիան, կարող է օգուտ բաղել ներկայ պատերազմից և գրաւել (?) Ֆինլանդիան: (Нов. Обозр.)

ՆԱՍՏԱՅ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Ռաշա, մարտի 22-ին

Օրինաւոր հոգաբարձութիւն չունենք, սակայն մեր այժմեան հոգաբարձութիւնն էլ ապօրինի չէ, այն հոգաբարձութիւնը, որ նոր ընտրվեց և որը դեռ իր պաշտօնի գլուխ չէ անցել, նոյնպէս ապօրինի չէ: Միջին ճանապարհի վրա ենք գտնվում, խաղաղ է մեր շուրջ կողմը ամեն ինչ, բայց և այնպէս մեր հոգաբարձութեան առաջ դրված կան մի քանի լուրջ հարցեր:

1) Տղայոց ուսումնարանի շինութեան խնդիրը, որը գլուխ բերելու համար արանից չորս տարի առաջ մի յանձնաժողով էր կազմվել: «Տղայոց ուսումնարանի շինութեան յանձնաժողով» անունով, որ ստեղծ էր ստեղծ բանիկներ և ստորագրել տուել բաւական աչքի ընկնող մի գումար: Բայց չը գիտեմ ինչո՞ւ այդ յանձնաժողովը երեք տարի շարունակ դադարեցել էր իր գօրծունէութիւնը և ստորագրված գումարները գտնվում էին ստորագրողների գանձարաններում, բացի այ. Ա. Տէր-Օսանեանի: Նուիրաբերած 50,000 պղնձը, որ անձրեւների տակ մաշվում էր: Անցած տարի այդ խնդրի համար կայացաւ խառն ժողով հոգաբարձուների, ուսուցիչների և յանձնաժողովի անդամների մասնակցութեամբ և նոր գումարների դարձեալ ստորագրվեցին: Սակայն ի՞նչու հասարակական կեանքի յուզել ելե՞լները և նորից յետ միջին ժամանակաւոր կերպով ուսումնարանի շինութեան գօրծը: Եւ այսօր այդ հարցը դարձեալ կայ: Հոգաբարձութիւնը պէտք ունի գրամի, հարկաւոր է եռանդ: Հին հոգաբարձուներից մինը յայտարարում էր, որ այս մայիսին ուսումնարանի հիմքը պիտի դրվի, նոր հոգաբարձուներից ոմանք էլ այդ փառքը իրանց են ցանկանում վերապահել և գօրծը առ այժմ մնում է, մանաւանդ որ մասնաւոր բարեխարութեան վրա էլ յոյս ունեն դրած:

2) Երկրորդ լուրջ հարցը. այս տարի հոգաբարձութեան ծախսը աւելացել է, իսկ այդ ծախսերը փակելու համար արդիւններ չը կան: Անցեալ տարի 70—80 թուական դէֆիցիտ կար, իսկ այս տարի դրա եռապատիկ-բազմապատիկ է գուշակվում: Գրեթէ միշտ հոգաբարձուները այդ դէֆիցիտները ծածկել են իրանց գրպանից, իրանց անձնական միջոցներով, երբեք այս տարի նոյնը տեղի է ունենալու: Միջին ճանապարհի քաղաքականութիւնը եթէ չը լինէր, գուցէ այս տարի գօրծերը ուրիշ ընթացք ստանային: Նորենտր, բայց դեռ պաշտօնի գլուխ չանցած հոգաբարձուներից մէկը պնդում է, որ իրանք կը հոգան ուսումնարանական բոլոր ծախսերը առանց որ և է արդիւնքի անմիջ կանխու, բայց կրանք պաշտօնի մէջ չեն: Հենք էլ այդ դէֆիցիտը տեսնում են... բայց... էլ ի բայցից, միջին ճանապարհի բայցից: Մի բան ճիշդ է, որ մեր քաղաքի հասարակական ամեն մի մարմին չունի ոչ իր իրաւունքները, ոչ էլ պատասխանատւութիւնները: Օրինաւոր ձեռով գծված: Նրանց շատ իրաւունքները չեն յարգվում և շատ լուրջ պատասխանատւութիւնների են ենթարկվում, կամ չափազանց մեծ գօրծեր են կատարում առանց որ և է պատասխանատւութիւնից երկնջելու մէջ: Մինչև այսօր դեռ սպասում ենք Սպանիայից եկող օրագիրին:

3) Երրորդ լուրջ հարցը մեր ազգային հացադրժարանի խնդիրն է, հինգ հարկեր թուականի մի խնդիր, որը կիսով չափ կամ գրեթէ ամբողջութեամբ կարգադրված է: Այս խնդրում են էլ հոգաբարձութիւնը միջին ճանապարհը բռնեց: Նա չը թողեց, որ մի քանի ամիս անցնէ, նոր հոգաբարձութիւնը իր պաշտօնը ձեռք առնէ ու անօրինէ այդ հարցը, այլ հացադրժարանը կապով տուեց քաղաքի խառնվածք և լիարժեքութիւնը մէկին, որ նոյն հոգաբարձութեան անդամ է:

Դրանից զատ կային Հայուհեաց ընկերու-

թեան իրաւունքների ու պատասխանատւութեան չափի խնդիր, երկար յուզումների վախճանը եղող այլ և այլ ընկերութիւնների կազմակերպութեան և այլ խնդիրներ, որոնցով հոգաբարձութիւնը պարտաւոր էր լուրջ հետաքրքրվել:

Սակայն հետաքրքրվեց նա: Բացարձակապէս ոչ: Եւ ինչո՞ւ:

Որովհետեւ նրա իրաւասութիւնը որոշ չափ չունէր, ոչ էլ նա կարող էր իրան ձեռնհաս համարել բոլոր հասարակական մարմինների վրա, որպէս վերահսկիչ հակելու: Միջին ճանապարհի քաղաքականութեան հետեանքն էր այդ: Եւ դրա հետեանքը այն է. 1) որ անորոշ է մնացել տղայոց դպրոցի շինութեան հարցը. 2) որ կազմակերպվում են ընկերութիւններ կամ կազմաւորվում են առանց որոշ վերահսկողութեան ենթարկվելու. 3) որ ուսումնարանի ղեկավարութեան մօտ ապագան դեռ անորոշ է:

1901—1902 ուսումնարանական շրջանի վերջում մի հոգաբարձու էր մնացել, պ. Ա. Յորդանանյան, որ ստեղծված էր եղել վճարել ուսումնարանի ծախսերի մնացորդը իր գրպանից ու հրաժարվել էր: Նոր հոգաբարձութիւնը ընտրվել էր յունիսի ընթացքում, բայց երկար տատանումներից յետոյ նա համաձայնվել էր պաշտօնի գլուխ անցնել միմիայն սեպտեմբեր ամսին, և իսկապէս 1902—1903 շրջանի համար ուսուցիչ հրաւիրելից սեպտեմբերի 18-ին, բարեխարստաւոր կար այստեղ մէկը, որին վարձեցին, ապապէս մինչև հոկտեմբերի վերջը հազիւ կարող էին բերել տալ: Այս տարի սպասվում է նոյնը: Գին հոգաբարձութիւնը որոշել է հրաժարվել, նորն էլ արդէն գրամի վտանգից սկսել է վախենալ և սպասվում է երրորդ հոգաբարձութեան ընտրութիւնը: Տեսնենք ի՞նչ կը լինի դրա հետեանքը:

Գր. Մարգարեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

22 մարտի

ՍԵՎԱՍՏՊՈԼ: Բաղադրադուր ռուրջ քաղաքներից շատ հեռադիրներ ստացաւ, որոնցով խնդրում են ողջին մատուցանել «Վարեագի» և «Կօրէնցի» հերթներին: Օֆիցէրների և նաւաստիների երեւոյ հիացմունքով է դիմաւորվում հասարակութիւնը:

ԲԱՆԳՈՎԵՇԶԵՍԿ: Ժամանեց պատերազմական գօրծողութիւնների բնւ գնալու համար պարսկական պրինց շտաբ-բոսովները: Երազդունների գնդի շտաբ-բոսովները: ՆիժժՈՒՄԵ: (Ռէյտ. գործ.): Այստեղ հասաւ մամուլի ներկայացուցիչներից վարձված շոգենաւը, շոգենաւի վրա գտնվող երկու հապօնացի—լաբէյները անպապող կալանաւորվեցին: Երեկ նրանց բաց կը թողնեն միայն մի քանի ամիսից յետոյ: Նոգենաւի բոլոր ծառայողները գտնվում են ուսանելի հակողութեան տակ: Շոգենաւը հրաման ստացաւ հեռանալ, օգուտ քաղելով տեղատուութիւնից: Մինչև այժմ ուսնաց իշխանութիւնները շատ սիրելիք են: Առևտրային, առևտրական նաւերը, երկաթուղին և հեռագիրը վայելում են անհրաժեշտ ազատութիւն:

ՍԵՆՈՒ: (Ռէյտ. գործ.): 22 մուլաօ եկան հապօնական հինգ փոխադրող նաւեր արտիլերիայով, հեծելազօր և հեռակա զօրքերով: Այդ զօրքերը գնում են Սէուլ—Այստեղ ժամանեց Սէուլի նոր նշանակված կօմիսնարան ինքադուշի: Կօրէնցիների խօսքերով, ռուսները լրատու ծառայութեան համար ունեն վարձված շներ:

10ԵՂՈՒ: (Ռէյտ. գործ.): Տունայից հաղորդում են, որ գնդապետ Եմբիսկզաւանդ ստացաւ 2ինաստանի ներկայացուցչի գրութիւնը Լիսաւում, որը ծանուցանում է նրան, թէ ցանկանում է հանդիպել Անգլիայի ներկայացուցչի հետ, բայց որին պաշտօնաւորում նա, վրա է աշխկեցել, այդ պատճառով նա, 2ինաստանի ներկայացուցչից, դիտաւորութիւն ունի գնալ այժմ Գիւնդ-Յէ:

10ԵՂՈՒ: (Ռէյտ. գործ.): Տունայից ստացված տեղեկութիւնների համեմատ, չինացիները հաղորդում են Կիսաօվէի լուրջ պաշտպանութեան համար պատրաստութիւնների մասին: Կիսաօվէում կենտրոնացած են 500 մարդ հեծելազօր և 7000 մարդ հետեակ: Դօր-ժիւկ այժմ գտնվում է Լիսաւում, ուր գերակողող ազդեցութիւն է վայելում. նա նշանակված է Թիւրանօթաձիւ գօրծի հրամանատար և դաւայ-լամայի գանձապահ:

ՍԵՆՈՒ: (Ռէյտ. գործ.): Ներկայումս 22-

մուլաօ ափ են իջեցրած հապօնական երկու-թուղիական և հեծեալ զօրքեր, որոնք պէտք է երկաթուղի կառուցանել Սէուլի և Ի-Չժիւի միջև:

ՇԱՆԳՀԱՅ: (Ռէյտ. գործ.): Ենպօնիայից ստացված տեղեկութիւնների համեմատ, հապօնական ամբողջ հեռակա զօրաբաժինը ափ է իջեցրած ցամաքի վրա և դիւբեր գրաւեց Կօրէսյի հիւսիս-արևմուտքում:

ՄԵՍՍՈՒՆԱ: (Վօլֆ. գործ.): Վիլհելմ կայսրը ափ իջաւ և զբոսանք կատարեց դէպի գերեզմանատուն: Տեսնելով գերեզմանատունը, կայսրը վերադարձաւ զբոսանալու:

10ԵՂՈՒ: (Ռէյտ. գործ.): Մինչև Գիւնդ-Յէ առաջ շարժվող տիբեթական արշաւանքի բաղադրական բնաւորութիւնը չի փոխվել, չը նախելով նրա ունեցած ընդհարմանը տիբեթցիների հետ:

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական տեղեկութիւններ Հեռու Արեւելքի մարտի 22-ին չեն ստացված:—Թագաւոր Կայսր Բարձրագոյն հրամայեց տալ 1-ին կարգի կրէյսեր «Վարեագի» և «Կօրէնց» մարտանաւի օֆիցէրներին, բանասային և բժիշկներին մէկ և կէս տարվայ ոտնիկներ, իսկ կօնուկաւորական կոչում ունեցող նաւաստիներին 180-ական բւրաքանչիւրին:

Մարտի 22-ին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդօրօվնայն այցելեց Ալեքսանդրովսկի ինստիտուտը:

Օրէնքուրդի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Բոստօլցէվ ամենաողորմածաւոր իր խնդրերի համեմատ, արձակված է ծառայութիւնից:

ՊՐՏ-ԱՐՏՈՒՐ: (Սեփական թղթակցից): Մարտի 21-ին փոխադրան ճանապարհ ընկաւ Մուկլէն:—Մարտի 22-ին Մեծ Իշխան Բօրիս Վլադիմիրովիչ ճանապարհ ընկաւ դէպի գօրծող գօրծը:—Թշնամին չէ երևում:

ՎԱՆԻՎՈՍՏՕԿ: (Սեփ. թղթակցից): Գնացածներից շատերը վերադառնում են Ռուսական ճանապարհի վրա վերականգնվեց մասնաւոր բեռների ընդունելութիւնը. սկսվեցին տաք օրեր:

ՇԱՆԳՀԱՅ: (Ռէյտ. գործ.): Ներկայումս 260,000 հապօնացիներ են հաշուած գօրծող գօրծի մէջ, բայց դրանից բերելու հոգաբարձու մէջ գտնվում են 60,000—կազմ ու պատրաստ հապօնացիների, անկախ դեռ ևս զենքի չը կոչված պահեստի գօրծից: Գլխաւոր շտաբը լուսթիւն է պահպանում արշաւանքի ծրագրի մասին, բայց կարծում են, որ հապօնական զինւորական ուժերը կը պատրաստվեն երեք զօրաբաժիններով:—Ենպօնական իշխանութիւնները բեկվիդիցիայի միջոցով վերցնում են ձիեր հազարներով: Իւրաքանչիւր զօրաբաժինը իր հետ կունենայ նշանաւոր թուղի հեծելազօր: Ենպօնական հեծելազօրքը մարդիկը և ձիերը չեն կարող համեմատվել եւրօպական հեծելազօրքի հետ, բայց հապօնական օֆիցէրները յայտնեցին, որ հեծելազօրքը ցոյց կը տայ, որ նա կարգադրանք իր վրա դրված յոյսերը: Կօրէս ուղարկվող հապօնական թորանքները խոշոր բերաններ ունեցողներ չեն: Այնուամենայնիւ կարծում են, որ Ենպօնիայում կան ծանր տիպի բաւարեաններ, որոնք իրանց յատկութիւններով հաւասարվում են դաւայային լաւագոյն արտիլերիային:—Կօրէսյում և Մանչուրիայում ձիերը սկսել են հալվել, որոնք անանցանելի են դարձնում ճանապարհները:

ՍԵՆՈՒ: (Ռէյտ. գործ.): Եմիսիւն, որը դեպքում էր նշանակված Ենպօնիայում, հրաժարական տուեց:

ՍԵՎԱՍՏՊՈԼ: Վարեագիներին պարգևներ բաժանվեցին տարեկան ոտնիկների չափով: Նրանց ուրախութիւնը ամենամեծն է: Դիմաւորման հանդէսները յետագայում են մինչև բոլորի պալլ: Ստեպանովին ուղարկված քաղմաթիւ հեռագիրների թում կայ մէկը կուրսանան գօրծի պօլտաւեան առաջին հեծելազինեց, որը գէորգեան դրօշակներ ունի 1328 թվ. Բրախովի մօտ թիւրքաց նաւատորմը շարելու համար, այդ հեռագիրը մանաւանդ թանգ է պատերազմական անցելով կապված գօրծին և նաւաստիներին: Ձեն մուսցված ուրինք Պետրոս Մեծի խօսքերը:—Իւրաքանչիւր իշխանաւոր, որը միայնակ ցամաքային գօրծ ունի—միայն մի ձեռք ունի, իսկ ով նաւատորմ ունի—նա երկու ձեռք ունի):

ՍՕՖԻԱ: Մարտի 22-ին մօտ կէսօրին երկաշարժ էր, զգացվում էին երեք դրեղ ցնցումներ. ազդարանակութեան մէջ սկսված սարսափը երկար չը շարունակվեց: աննշան ֆլաս պատճառեց երկրաշարժը: Բօլզարիայի ամբողջ հարաւային և արեւելեան մասում:

